

մինչև երեքհարիւր հատ կ'ըլլայ — ջրին
երեսը թողուց, ինքը թուաւ։ Ա՛լ անկէ
աւելի ինչ ունէր ընելիք։ Մայրական
խնամքն ու հոգը զինքը այն կէտին կը
մղէր. ըրաւ, լմնցուց։ Մնացածը ապա։
իրեն զաւկներուն կեանքը ապա։

Այն էակին ձեռքն է որ զինքն ալ
ամէն վտանգէ ու փորձանքէ ազատե-
լէն ետքը՝ նոյն կէտը հասուցեր էր։

Հետեւեալն ուրիշ անգամ։

Հ. 8. Վ. ԽՍԱՎԵՐՏԵՆՑ

Եղիպտացոց գրականուրիւնն, ա-
րուեստն ու մեծագործուրիւնն։

Եղիպտացոց պէս հին ատեն իմաս-
տովթեամբ, արուեստիւք և ուսմամբ
յառաջադէմ և երեւելի աղդ մը՝ պէտք
է որ գրականութիւն ունեցած ըլլայ՝
որով և գրքեր՝ իրեւ աւանդապահ ի-
րեն գրականութեանը. և արդարեւ գի-
տենք որ Եղիպտացիք ամենահին ժա-
մանակներէ ՚ի վեր հարուստ մատենա-
դարաններ ունէին։ Դիոդոր Սիկիլիա-
ցին Ռսիմանտիաս թագաւորին գերեզ-
մանը նկարագրելով, անհուն պալա-
տին այլ և այլ մասանցը մէջ կը յի-
շատակէ նաև սրբազն գրատուն մը ո-
րուն ճակտին վրայ գրուած էր՝ թշկա-
րան հոգրոյ։ Թէպէտ և սուտ հանուե-
ցաւ Ռսիմանտիասի այս շիրիմը և հե-
տեւարար անանկ հոչակաւոր գրատուն
մը շինուած ըլլալը, բայց ուրիշ գրա-
տուն մը գտնուեցաւ Ռսիմէսսէնի ա-
ւերակացը մէջ, որ երկու աստուածոց
պաշտպանութեանը նուիրեալ էր. մէյ
մը թոթայ՝ որ Եղիպտացոց ուսմանց
և արուեստից աստուածն էր. և եր-
կրորդ՝ Սափրեայ՝ թոթայ հարսին, ո-
րուն անունը շատ հոչակաւած էր իրեւ
գշխոյ գլուխութեանց։

Շատ գժուար է սոսուգապէս դիտ-
նալը թէ արդեք ինչպիսի գրքերէ կը
ձեանային այս հաւաքմունքները. բայց

մեր ձեռքը հասած պապիրներէն կըր-
նանք գաղափար մ'առնուլ անոնց հա-
րրատութեանը վրայ. աս պապիրներուն
մեծ մասը աստղագիտական, մողա-
կան և բժշկական գրուածքներ են,
կամ հանճարեղաբանութիւններ և նը-
փրական տօնացոյցներ. մաս մ'ալ դիւ-
ցազնական և վիպասանական գրուած-
ներ, հասարակաց դիպաց կամ ա-
ռանձնական գործոց նկատմամբ. զոր
օրինակ՝ այն դիսցազներգութիւնը, որ
Մեծին Հռամնէսի քաջութիւնները կը
պատմէ, զոր թարգմանած է Պ. տը
Ռուժէ։ Հմուտ հնագիտին այս և ասոր
նման ըրած ուրիշ թարգմանութիւն-
ներէն յայտնի կ'երևնայ թէ հինք շատ
կ'ախորժէին իրենց կրօնքին վարդա-
պետութիւնները վիպասանութեամբ
և խրատական առասպելներով սոր-
վեցնել։

Եղիպտացոց պէս զգօն և հանդար-
տարարոյ աղդի մը գրականութեան
մեծ նկամքը հարկաւ պէտք էր կրօնքն
ըլլար. և իրաւոցնէ կը տեսնենք որ
Մէնքերէս՝ (Միկերինու) մեծ բուրգե-
րը շինող թագաւորներէն մէկը՝ ձանա-
պարին արեւու անունով գիրք մը շա-
րադրած էր. բայց նոյն թագաւորին
ամենէն անուանի գրուածքն է այն զոր
եղիպտագէտք Մաշուոց անուանեցին,
որուն մէջ բովանդակուած էր Եղիպ-
տացոց փիլիսոփայական և կրօնական
ամենայն գիտութիւնը. և ասկէ օրի-
նակ մը իւրաքանչիւր մոմիային գագա-
ղին մէջ կը դնէին, ըստ հանգուցելոյն
հարստութեանը աւելի կամ նուազ
կատարեալ։ Գրեթէ բոլոր գիրքը հոգ-
ւոյ անմահութեան վարդապետութեան
վրայ է. բաց կան նաև մէջը տաղեր,
աղօթքներ և թաղման և մեռելոց պաշ-
տօնին նկատմամբ առանձինն ձեւը։
Նշանաւոր գլուխներէն մէկն է հան-
դերձեալ կեւաց վրայինը. ասոր մէջէն
կ'իմայուի հոգւոյն երկնային անդնդոց
այլ և այլ գաւառներուն մէջ ընելիք
պանդիստութեանց բովանդակ ընթաց-
քը։ Ուրիշ գլուխներու մէջէն ալ կ'ի-
մայուի թէ մեռեալը ինչպէս իրեն վը-

ճիոր լսելէն առաջ Ոսկրիսի ատենին առջև ինքզինքը պիտի արդարացնէ և ինչպէս պիտի խոստովանի ըրածները : Այս գրքէս այլ և այլ հաստուկտիր մասեր կարդացուած են երկոտասաներորդ հարատութեան շէնքի մը վրայ . որով յայտնի կ'ըլլայ թէ մեռելոց համար եղած այսպիսի արարողութիւնները շատ հին են :

Քուրմերը կ'ըսէին թէ թոթ կամ Հերմէս Ա , Տրիսմեգիստոս կամ Եռամեծ , որ գերագոյն Աստուծոյն հրամանաւը շատ գրքեր գրեց , ինքը եղաւ նոյնպէս մարդկային և աշխարհային գիտութեան հետ նաև հանդերձեալ կենաց վրայօք եղած ծանօթութիւնները Եգիպտացոց հաղորդողը : Առաջին թոթն է , կ'ըսէին , երկնային Հերմէս , կամ իմացականութիւնն աստուածային՝ անձնաւորեալ : Երկրորդ Հերմէսը , որ առաջնոյն նմանութիւնն էր , Եգիպտոսի ամենայն առտնին ընկերական կրթութեանը պատճառ կը սեպուէր . ինքն էր Եգիպտացոց ազգը կարգաւորողը և կրօնքին հաստատողը , կրօնական պաշտամանց արարողութիւնները կանոնաւորողը , մարդկանց աստղաբաշխութիւն , թուաբանութիւն , երկրաչափութիւն ու չափուց և կշռոց գործածութիւն սորվեցնողը : Նոյնպէս ինքը եղաւ , կ'ըսէին , մարդկանց լեզու , գրութիւն , գեղարուեստ բաշխողը , և վերջապէս ամենայն ինչ որ պատճառ է քաղաքականութեան : Այս ամենայն գիտութիւնք քառասուն և երկու սըրբազան գրքերու մէջ աւանդուած էին և անոնց մէջինը աւանդապահ քուրմերը պարտաւորեալ էին գիտնալ՝ ամբողջ և կամ մասամբ , ըստ օրինաց իրենց պաշտօնին և դասաւորութեան կարգին :

Ինչպէս Ոսկրիս՝ որ կը նշանակէր ոյժ և զօրութիւն , օրինակ էր թագաւորաց , այսպէս ալ թոթ կամ Հերմէս օրինակ էր քրմաց , և պաշտօնեայ ուսման և կրօնի : Զանազան քրմաց ձեռքով եղած գիւտերն ամէնն ալ իրեն կ'ընծայուէին , որոնց ուսուցիչն և օրի-

նակն էր . վերջապէս , Հերմէս՝ ուսմունքն էր , ըստ մտաց Եգիպտացաց , և քրմաց իմաստուն դամն էր :

Բայց Եգիպտացիք հին ազգաց մէջ՝ ի վեր քան զամենայն երևելի են իրենց մեծագործութեամբը , որոնցմով լի է ինչուան այսօր Նեղոսի հովիտը :

Այս հրաշալի շէնքերը տեսնելով , որ միշտ կարգէ գուրս զարմացուցեր են ճանապարհորդները , խնդիր մը կը զարթնու մէկէն մեր մտաց մէջ , թէ ինչպէս արդեօք Եգիպտացիք այսպիսի շէնքեր կառուցին : Ոմանք կարծեցին թէ քուրմերը՝ որ շատ անգամ այս մեծամեծ աշխատութեանց դլուխ կը կենային , մեքենական գիւտեր գործածեցին , որուն գաղտնիքը թաղուած մընաց Եգիպտոսի սրբարաններուն մէջ : Այս կարծիքս որ ուժեւտաններորդ դարուն մէջ առհասարակ ամենուն մտացը հաւանական կ'երենար , հիմա գրեթէ ամենեւին ընդունելի չէ : Արդէն Դիոդոր Սիկիլիացին յայտնապէս կ'ըսէ թէ Եգիպտացիք մեքենայ չունէին . և հաւասարի է ըսածը , վասն զի ինչուան հիմա գտնուած այնչափ շէնքերուն վրայ , ուր որ նկարուած է Եգիպտացոց ամենայն զբաղմունքն և ճարտարութիւնը , ամենապարզ մեքենայի հետք մ'ալ տեսնուած չէ :

Եթէ Եգիպտացիք մեքենայ ունենային , նշանը կ'երեւար , կ'ըսէ Պ . Լրդրոն : Ոսորդասենի ժամանակէն մնացած խորաքանդակի մը վրայ , որ մեծ քարի մը փոխադրութիւնը կը ներկայացնէ , քարը չուաններով կապուած է և բաղմութիւն մարդկանց պարանին երկայնութեամբը շարուած կը քաշեն . ոմանք դոյլեր կը բերեն չուանները թրյելու և արուեստական ճամբան եղութելու համար , որուն վրայէն քարը կը քաշեն : — Իրենց թեւերուն ուժը ամենը մէկէն կը միացնէին , կ'ըսէ , երդով մը կամ կանոնաւոր զարնուածքով մը , անոր համար մէկ մը միշտ կ'ըլլար քարին վրայ : Թէ որ 1000 հոգի բաւական չըլլար՝ 10,000 կը դնէին , կամ որչափ մարդ որ կընային հաւա-

քել նոյն կիտին վրայ մի և նոյն գործողութեան համար . այսպէս , ըստ Պիհնոսի , Հռամսէս 120,000 մարդ գործածած էր թէրէի կոթողներէն մէկը վեր կանգնելու համար , որով յայտնի կըլլայ թէ ամենեին մեքենայ չունէին . իսկ ըստ Երոդոսոսի 100,000 հոգի աշխատած էին մեծ բուրգին շինութեանն համար : Ուրեմն ամենապարզ հնարքներով և շատ մարդ աշխատցընելով , վիթխարի քարի կտորներ այնպիսի բարձր տեղուանկը կը հանէին . և այս հնարքներուս մէջ զիսաւորն էր զառ՝ ի վայր ճամբով վեր հանելը : Սիւներն ու գերանները քանի կը բարձրանային՝ հողով կը ծածկէին , և ըստ հարկին կ'երկնցընէին զառ՝ ի վայր ճամբան : Միանգամայն նոյն գիւտին մէկ ուրիշ կերպ գործադրութեամբը , այսինքն ոլորտապտոյտ զառ՝ ի վայրով , և միայն Ծակի օգնութեամբ և բազմութեամբ մարդկանց կը կանգնէին կոթողները : Ահաւասիկ այս է խնդրոյս վրայք՝ որ այնչափ վէճ վերցուցած է , հիմակուան երեսի անձանց կարծիքը . և գրեթէ այս մի և նոյն կարծիքս ունի նաև Երոդոտ :

Եգիպտական արուեստն իրեն ո՛ր և իցէ գործքը միշտ հսկայած համեմատութեան մէջ մտածած է : Ճարտարապետութիւնն և քանդակադրութիւնը միշտ մեծ ու վսեմ էին և արձանները միշտ վիթխարի . ու Եգիպտացի արձանագործին համար ամենէն ախորժելի ոճն էր սփինգսը . որ ինչպէս յայտնի է՝ մարդու գլուխ է՝ ծնրադիր և առջնի երկու ոտքերը երկնցուցած առիւծի մը մարմնոյն վրայ ագուցուած և որովհետև Եգիպտացւոց ամենայն բանին մէջ առանձին խորհուրդ մը կամ ուսումնական մտածութիւն մը կայ կը սեպուի , ուստի կը կարծուի թէ այս արձանները խորհրդաբար կը նշանակէին Նեղոսի ողողմունքը՝ Առիւծ և կոյս համաստեղութեանց տակ . բայց նաև ստոյդ է թէ սփինգսին ձեւ սրբադրոշմ գրերուն մէջ Տէր կը նշանակէր , որով ըսել է թէ թագաւորութեան նշան

մըն էր : Յայտնի է դարձեալ թէ բուրգերուն սփինգսը թուղմոսիս Դ թագաւորին մեծայազիթ կերպարանքն է :

Այսպիսի չէնքեր ու արձաններ անբաւ կային նաև թերայիդի մէջ . կային նաև հսկայած ամբարտակներ , որոնց մէջ շատ անուանի էր Մեմնոնի արձանը . և ասոր աւերակներէն քիչ հեռու գտնուեցան տասնըութը ուրիշ ամբարտակներ . որոնց ամենէն պղտիկը քսան ուղք բարձրութիւն ունի :

Եգիպտացիք շատ մ'ալ բնական մեծութեամբ արձաններ ունէին որ Եւրոպայի այլ և այլ թանգարաններուն մէջ կը գտնուին ու կը զարմացնեն ըզտեսողս : Երկոտասաններորդ գարու Ապտալլադին անունով արաբացի հեղինակ մը կ'ըսէ , թէ այս արձաններուն կերպարանաց գեղեցկութեանն և համեմատութեանց ճշգութեանը մէջ մարդկային ամենագերազանց արուեստ կը տեսնուի , և ինչ կատարելութիւն որ կրնայ ընդունիլ քարի պէս նիւթ մը . միայն կը պակսի , կ'ըսէ , մարմնոյ և մկանանց նմանութիւնը . « Երկու երես առ երես գարձած առիւծներ տեսայ կ'ըսէ , քիչ մը հեռուէն որոնց տեսպը՝ սարսափելի էր » :

Եգիպտացւոց այս արձանական ձեռագործներուն մէջ պէտք չէ մոռնալ նաև շատ մ'ալ գեղեցիկ ու կատարեալ արուեստով խորպանդակներ , որոնց ընթերցումն անշուշտ մեծ լցուպիտի ըլլայ Եգիպտացւոց պատմութեանը որ գեռ շատ անորոշ է :

Իսկ Եգիպտացւոց նկարչութեանը քիչ լիշատակ մնացած է . քանի մը առանձնականաց տներու աւերակաց մէջ և Պէնի-Հասսանի գերեզմանական անձաներուն մէջ գտնուած տեսարաններէն կ'երենայ թէ գիտէին նըկարչութեան արուեստին մեծ բարակութիւն և զարմանալի գեղեցկութիւն մը տալ :

Հիւկսոսներուն հալածուելէն անմիջապէս ետքը Եգիպտացւոց ճարտարապետութիւնն իր վերջին կատարելութեանն հասաւ , որ է թուղմոսիսներուն

և Հուամսէսներուն միջոցը . այն ատեն ամենայն ինչ մեծ և վսեմ է , միանդամայն չքեզ և կատարեալ : Եգիպտական հանճարը բորբռքեցաւ այն յիշատակի արժանի դիպուածին վրայ , այսինքն օտարները վոնտելէն և երկիրն ազատելէն վերջը , և ամենայն հարատութիւնը թերայիդի հրաշալի շնչքերուն վրայ թափեց , որոնց աւերակները կը զարմացնեն ճանապարհողները : Այս թերական շնչքերուն էն նշանաւորները միանդամայն թէտաձար և թէ պալատ էին և Նեղոսի գետափանց վրայ կանգնուած էին : Քառնաքայ և Լոքսորի մեծագործ շնչքերը գետայն աջ կողմն են . իսկ ձախ կողմն կ'իյնան կուռնակ , Ռամէսսէոն և Մէտինէ-Ապու ըսուած այլ և այլ խումբ շնչքերը :

Մնկարելի է դաղափար մը տալ այն սիւներու հրաշալի դահլծին վրայ որ քառնաքայ դահլիճ կը կոչուի : Աշտարակաց անտառ մը երեւակայեցէք , կ'ըսէ Պ . Ամրէր . ենթադրեցէք 134 Վանտումայ սեան մեծութեանն հաւասար մեծամեծ սիւներ , որոնց էն բարձրերը 23 մեդր բարձրութիւն և 3 ու կէս մեդր տրամագիծ ունին , և վրանին լեցուն խորաքանդակներ և սրբադրոշմ գրութիւններ կան : Խոյակներուն շրջապատն է 21 մեդր . դահլիճին երկայնութիւնն է 103 մեդր , իսկ լայնութիւնը 50 : Դահլիճը բոլոր չորս կողմանէ գոց էր , և ըյս տալու համար շինուած պատուհաններէն մէկն ալ դեռինչուան հիմա կ'երևայ : Անշուշտ իրենց դամբանականներուն և հանդիսական ժողովքներն ընելու որոշեալ տեղն էր , և ոչ թէ տաճար : Քառնաքայ այս մեծ դահլիճը Հռամսէս Սեսոստրի ատեն լմնցաւ , բայց դրեթէ ամբողջ իր հօրը Սեթոսի ատեն շինուած էր , որոն քա-

յութիւններն որմերուն վրայ կ'երեայ և արդարեւ դիցազներդութիւն մը կը ձեացնէ :

Դահլծին մօտերն էր թուղմոսիսին պալատը , և այս պալատին մէկ անկիւնը հոչակաւոր պղոտի սենեակ մը կար , սենեակ Քառնաքայ անուամբ , որ Բարիզ փոխադրուած է , ուր ամէն ուղղող կրնայ տեսնալ : Շատ յարգի կը սեպուի այս շնչքս վրան եղած թաղաւորաց շարքին համար , որ ութեւտասներորդ հարատութենէն առաջ են , և անանկ ժամանակի մը կը վերաբերին ուսկից գրեթէ բնաւ պատմական յիշատակարան մնացած չէ : Քառնաքայ աւերակաց հարաւային արևմտեան անկիւնէն սփինքսի ճամբայ մը կը սկսի , որ ատենօք կ'երթար կը միանար Լոքսորի պալատին հետ . և այսպէս երկու կարգ խորհրդաւոր նշաններով կը միանային այս երկու հոյակապ պալատները , որոնց նմանը դեռ Եւրոպա տեսած չէ :

Լոքսոր արաբերէն պալատ կը նշանակէ , և քառնաքայ պէս խառնուրդ մըն է այլ և այլ դարուց շինուածոց : Ամենէն հին մասը Ամենովիս Գ շինած է ութեւտասներորդ հարատութեան մէջ , զոր Յոյնք Մեմնոն կ'անուաննեն : Լոքսորի հիւսիսային կողմէն սիւներու սրահ մը դէպ 'ի ուրիշ պալատ մը կը հանէ , զոր մեծն Հռամսէս շինած է , և դեռ հիմա ևս 2500 մեդր մակերեսոյթ երկրի բռնած է . այս պալատին առջև եղած դաւթին մէջ կանդնել տուած էր Հռամսէս այն երկու կոթողներն , որոնցմէ մէկը հիմա Բարիզու հրապարակներէն մէկուն զարդն է :

Հետեւակն յաջորդ բուռվ :